

Մարտի 2-ին Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի վերին աստիճանի հետաքրքրական ժողով ունեցաւ, ուր մի անգամ ևս պարզուեց մեր երկրին վերաբերեալ մի քանի բացառիկ կանօնների անտեղի լինելը:

Խնդիրը վերաբերուած էր մեր երկրի արդիւնաբերութեան մի շատ խոշոր ճիւղին, այն է՝ ծխախոտագործութեանը, որին սպառնում է մեծ վտանգ: Բանն այն է, որ այդ արդիւնագործութիւնը սկսուել է և ծաղկել Կովկասում Փոքր Ասիայից վաթսուական թուականներին գաղթած հայերի և յոյների շնորքով: Գաղթելով ինչ ինչ քաղաքական հանգամանքների պատճառով դէպի Սև ծովի ափերը, այդ մարդիկ սկսել են մշակել մինչև այդ ժամանակ վայրենի մի աւազականոց, ստեղծել են մի ամբողջ արդիւնագործութիւն, որ տալիս է տարեկան մօտ 10,000,000 ռուբլի եկամուտ: Ներկայումս ծխախոտագործութեամբ պարապողների թիւն է մօտ 5600 տուն, որոնցից 3700 տուն հայ, 1700 տ. յոյն և 200 տ. տաճիկ. միջին թուով մօտ 30,000 բնակիչ, որոնցից 20,000 հայ:

Այս գաղթականներն արել են այն, ինչ-որ չեն կարողացել անել մինչև այդ Սև ծովի ափերում ոչ տեղացիները և ոչ եկեղոք տարբերը. ստեղծել են ամենալաւ տեսակի ծխախոտագործութիւն, որ այսօր արդիւնահանում է ոչ միայն դէպի Ռուսիա, այլ և դէպի արտասահման: Բայց անախտիք: Այդ խելացի, եռանդուն, ազնիւ և գործունեայ գաղթականները օտարահպատակ են և հաստատ բնակութեան իրաւունք չունին: Նրանք ժամանակաւոր արտօնութիւններ են՝ ստացել ապրելու Սև ծովի ափերում: Այս տարի լրանում է նրանց տրուած վերջին ժամանակամիջոցը, որից յետոյ նրանք պարտաւոր են կամ յետ գաղթել դէպի Անատոլիա կամ ընդունել ռուսահպատակութիւն: Յետ գաղթել—կը նշանակէ զրկուել մի շահաւետ գործից և սնանկանալ, ռուսահպատակութիւն ընդունել—կը նշանակէ դատապարտուել աղքատութեան, որովհետև հպատակութիւն ընդունող գաղթականներին կառավարութիւնը չի ապահովում ոչ մի կտոր վարելահողով:

Այս մասին պ. Ալեքսանդր Քալանթարը մարտի 2-ին Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան ժողովում, որ կայացաւ պ. Մինամձալարովի նախագահութեամբ, մի համառօտ բայց համոզիչ զեկուցումն արաւ: Նա առաջարկեց ժողովին, որ որոշի Ընկերութեան միջոցով խնդրել Կովկասեան Կառավարչապետին միջամտել, որ գաղթականների համար ձեռք բերուի բնակութեան նոր ժամանակամիջոց, բացատրելով, որ



հակառակ դէպքում՝ ամբողջ Ռուսիան կը զրկուի մի շահաւէտ արդիւնագործութիւնից: Ժողովականներից ոմանք հարց զարթեցրին, արդեօք, որքան օգտակար է երկրիս ընդհանուր բարոյական և տնտեսական շահերի համար Սև ծովի ափերի գաղթականների համար հոգալը: Այս հարցին գեղեցիկ պատասխան տուեց կալուածատէր գէն. Շերվաշիձէն, մանրամասն բացատրելով, հայ և յոյն գաղթականների մեծ տնտեսական և բարոյական նշանակութիւնը ամբողջ երկրի համար: Իշխանը պնդեց, որ այդ մի բուռն ժողովուրդը տեղական ազգաբնակչութեան վրայ ունեցել է ահագին կրթական ազդեցութիւն, սովորցրել է նրան աշխատասիրութեան, տուել է նրան ապրելու միջոց և այլն: Յարգելի իշխանի ասելով, Անատոլիայի հայերն ու յոյները Սև ծովի ափերում մի բարձր կուլտուրական ոյժ են, մի տեսակ ամբրիկացիներ մի վայրենի երկրում: Իշխանի ճառն ընդունուեց բուռն ծափահարութեամբ: Գնահատելի տեղեկութիւններ տուեցին և Արտ. Լինֆիւսեանց, Ա. Իսահակեան և այլն:

Ժողովը միաձայն ընդունեց այդ առաջարկութիւնը և որոշեց, որ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի պատգամաւորութիւն ընտրի երկրիս կառավարչապետի պաշտօնակատարին ներկայանալու և խնդրելու նրա միջամտութիւնը մի բուռն խելացի, ազնիւ և վերին աստիճանի օգտակար ժողովրդից մեր երկիրը չը զրկելու համար:

Անցեալ փետրուարի 20-ին „Тифл. Листокъ“ լրագրի խմբագրատանը, նոյն թերթի խմբագրութեան նախաձեռնութեամբ ժողովուեցան քաղաքիս գրեթէ բոլոր լրագրիչների խմբագիրները կամ նոցա ներկայացուցիչները և ուղարկեցին Պ.-Բուրգ պետական խորհրդի անդամ Կօբէկօյին հետևեալ հեռագիրը. «Թիֆլիսի պարբերական հրատարակութիւնների ներքոյ ստորագրեալ խմբագիրներս միանում ենք մամուլը ճնշումներից ազատելու ընդհանուր ցանկութեան և խնդրում ենք՝ մամուլի օրէնսդրութեան վերաքննող յանձնաժողովին թոյլատրել մասնակցելու մեզանից ընտրուած երկու հոգու, մէկը ոռոգ պարբերական հրատարակութիւններից, միւսը՝ տեղական լեզուներով լոյս տեսնողների կողմից: Ստորագրեցին հետևեալ թերթերի խմբագիրներ, „Тифл. Листокъ“, „Новое Обоз“, „Цнобись Пурцели“, „Լուսայ“, „Кавк. Лист.“, „Моамбе“, „Иверія“, „Մշակ“, „Кавк. Сельск. Хоз. Вѣст.“, „Джеджили“, „Накадули“, „Աղբիւր“, „Տարազ“, „Могзаури“, „Մուրճ“: